

ԳՈՄՇԻ ՊՈԶԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի մարթ իրեք տղա ա ունենում:

Էդ տղեքը մենձանում են, կնիկ են ուզում թե չէ՝ հորն ու մորից բժանվում են, ապրուստը, տունը-տեղը ձեռներուց խլում, նրանց տանում գոմն են անում, ասում են.— Ըտի կացեք:

Անց ա կենում մխելի վախտ, էդ մարթի կնիկը բողմի ա գալի, մեռնում:

Մարթը մտածում ա, ասում ա.— Իմ տղեքը բեղովլաթ դուս էկան, ինձ մտիկ չի արին, կնիկս բողմիցը մեռավ, ես էլ էսա նրա օրը տիմ ընգնիլ, ի՞նչ անեմ:

Մտածում ա, մտածում, եղնա դրանք իրանց տան սնի գլխից կացրած մի գոմշի պոզ են ունենում, գնում ա պոկում, բերում ա մի թուղթ ա գրում, միջին դնում, տանում ա գոմի պատըմը պիւմ, ծերը մի քիչ ըրեվացնում:

Եղնա գնում ա մենձ տղին կանչում, թաքուն ընգաճումն ասում ա.— Դուք իմ տղեքն եք, իմ ջիգյարն եք, դուզ ա դուք բեղովլաթ դուս էկաք, ձեր հորն ու մորը դուս արիք ու մտիկ չարիք, հմա դուք արիք՝ ես անիլ չեմ, էլ եդ իմ ջիգյարն եք, խի՞ իմ ըշխատանքը ջուրը մաղվի, կորչի, շուն ու գելի փայ դառնա: Հրե տենում ե՛ս են պոզի ծերը, իմ ոսկին նրա միջին ա պիւած, մենակ քեզ եմ ասում, իմ վենձ տղեն ես, վասիաթ եմ անում, ես էս ա կմեռնիմ, էն ոսկին իմ մեռնելուց եդը քեզ եմ վասիաթ անում:

Էդ որ ասում ա, էդ վենձ տղեն հորը տանում ա տուն, կնիկը բերում ա պատրոնին լեղացնում, հաքցնում են, ուտացնում, խմացնում, էն թավուր պիւում են, էլ ասել չեմ կարալ:

Եդո հերը հմի էլ միջնակ տղի անգաճն ա մտնում, նրան էլ ա տհենց ասում, ինչ որ վենձ տղին: Պուճուր տղին էլ ա թաքուն նույն բանն ասում: Էդ տղեքը ոսկու ձեն են իմանում թե չէ, հորն իրար ձեռից խլում են, պատվում, ազիզ պիւում, դե ամեքն էլ հե գիդենում են, թե մենակ իրան ա ասել:

Վասիաթն էլ նհենց ա, որ չկել վասիաթ անողը մեռնում չի, բաց անելու իրավունք չունեն:

Նրանք հե գիդենում են՝ ըսօր-էքուց հերնորուն կմեռնի. հմա ո՞րդի, գալիս ա մի քսան տարի էլ ապրում: Վերջը մեռնում ա: Բերում են դրան մուզիկով, պատվավոր, առոք փառոք թաղում են, հմի թաղելիս ամեն մինը մտածում ա, թե. «Յարաք հերն ինչքա՞ն ոսկի ա վասիաթ արել»:

Թաղում են թե չէ՝ վենձ տղեն խատատ-մատատ աղաք ա ընգնում, որ գա ոսկին հաշվե:

Գնում ա գոմը մտնում, հենց ուզում ա պոզը պատիցը հանե, մին էլ տենում ա գոմի դուռը բաց էլավ, միջնեկ ախպերը գոմը մտավ: Դրանք չկելն իրար ըրեսի մտիկ են անում ու քար կտրում, մին էլ տենում են՝ պուճուր ախպերն էլ էկավ: Դրանք մի աչկով իրար ըրեսի են մտիկ անում, մի աչկով՝ պատի պոզին:

Շատ որ հուշտ էլած իրար ըրեսի պել են կտրում, վենձ ախպերն ասում ա.— Էս ա մեր հորը թաղեցինք պրծանք, հմի էլ բանի-գործի վախտ ա, ո՞ւր եք էկել պարապ-սարապ ըստի հվաքվել:

Ասում են.— Բա դո՞ւ ուր ես էկել:

Դե իրեքն էլ գլխի են ընգնում, որ վասիաթի հմար են էկել:

Վենձ ախպերն ասում ա.— Ես եմ վենձը օրենքով ինձ ա հասնում:

Նա՛ հա, նրանք չէ, նա՛ հա, նրանք չէ, խոսկներուն իրար ա հասնում, կռվում են, իրար տալի:

Դրանց ղլմաղալի վրա կնանիքներն էլ են գոմը գալի:

Վենձ ախպոր կնիկը գնում ա չիմնուն էլ դրադ անում, ասում ա.— Մինդ էլա ձեն մեք հանիլ, ես էդ վասիաթը բաց կանեմ, ինչքան որ ոսկի կա— չիմնուս էլ հավասար փայ կանեմ, ի՞նչ շահ կա կովելուց:

Դա քարը եդ ա տանում, պոզը հանում, տենում ա՝ դարդակ ա, մենակ միջին մի թուղթ ա դրած: Ասում են.— Հլբաթ ուրիշ տեղ ա պհած. թղթումը գրած կլի:

Թուղթը բաց ա անում, կարթում. «Ով էս թուղթը առաչին անքամ կարթա՝ էս պոզը կենա նրա...»: